ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2016 թվականի N 94 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, ԱՅՐՈՒՄ, ԿՈՂԲ, ԱԶԱՏԱՄՈՒՏ, ԱՃԱՐԿՈՒՏ, ԲԵՐՔԱԲԵՐ, ԳԱՆՁԱՔԱՐ, ԼՈՒՍԱՁՈՐ, ԴԻՏԱՎԱՆ, ՍԵՎՔԱՐ, ԿԻՐԱՆՑ, ՎԱՋԱՇԵՆ, ԱՅԳԵՊԱՐ, ԱՅԳԵՁՈՐ, ԱՐԾՎԱԲԵՐԴ, ՏԱՎՈՒՇ, ԻԾԱՔԱՐ, ՎԵՐԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ, ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ, ՄՈՎՍԵՍ, ՆԱՎՈՒՐ, ՆՈՐԱՇԵՆ, ՉԻՆՉԻՆ, ՉԻՆԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱՅԳԵՀՈՎԻՏ, ԵՆՈՔԱՎԱՆ, ԳԵՏԱՀՈՎԻՏ, ԲԵՐԴ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ, ՉՈՐԱԹԱՆ, ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԱՉԱՋՈՒՐ, ԱԿՆԱՂԲՅՈՒՐ, ԼՈՒՍԱՀՈՎԻՏ, ՆԵՐՔԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ, ՎԱՐԱԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի Ընտրական օրենսգրքի 144-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան, Այրում, Կողբ, Ազատամուտ, Աճարկուտ, Բերքաբեր, Գանձաքար, Լուսաձոր, Դիտավան, Սևքար, Կիրանց, Վազաշեն, Այգեպար, Այգեձոր, Արծվաբերդ, Տավուշ, Իծաքար, Վերին Ծաղկավան, Ներքին Կարմիրաղբյուր, Մովսես, Նավուր, Նորաշեն, Չինչին, Չինարի, համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, Այգեհովիտ, Ենոքավան, Գետահովիտ, Բերդ, Վերին Կարմիրաղբյուր, Չորաթան, Պառավաքար համայնքներում համայնքի ղեկավարի, Աչաջուր, Այնաղբյուր, Լուսահովիտ, Ներքին Ծաղկավան, Վարագավան համայնքներում ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակել 2016թ. սեպտեմբերի 18-ին:
2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին.
   Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.
   Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 40 և 41 ընտրատարածքային ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 9-ից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

06 հուլիսի 2016թ.
ք. Իջևան